Խմբագրական

ՆԱՐԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

ՆՈՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ՝ ՀԻՆ ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՄԲ

Նրանք, կարծես, հանձնում են Ղարաբաղը

Սկիզբը՝ նախորդ համարում

Ազատագրված տարածքների վերադարձման հարցը նոր չէ, որ արծարծվում է ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործընթացում: Վերջին 1,5-2 տավա ընթացքում այն դարձել է ԵԱՀԿ Մինսկի խմբի՝ հիմնախնդրի կարգավորման այն հիմնական առանցքը, որի շուրջը փորձում են կառուցել շինության մնացյալ հատվածը: Ազատագրված տարածքների վերադարձման հարցը երբեմն այնպես կտրուկ ու շեշտակի են առաջ քաշում համանախագահները, որ այդ պահանջների իրականացման հայաստանյան տեղական անդրադարձները միանգամից մատնում են հարցի առանցքային նշանակությունը: Մասնավորապես, դեռ շատ ժամանակ չի անցել հայաստանյան հանրային կարծիքի այն կտրուկ պոռթկումից, երբ << արտգործնախարար Վարդան Օսկանյանը միամտություն ունեցավ (միամատությու՞ն) «ազատագրված տարածքներ» արտահայտության փոխարեն օգտագործել «գրավյալ տարածքները»: Եթե այս շփոթմունքը հանրային կարծիքը ստուգելուն չէր ուղղված, ապա այս դեպքում երեւի թե ճիշտ է պնդել, թե բառերը մատնում են մտքում եղածը: «Գրավյալ տարածքների» արծարծումից հետո ծայր առան << արտգործնախարարի երկարատեւ արդարացումները, թե «գրավյալ տարածքները» անգլերենից թարգմանաբար նշանակում են «զբաղեցրած տարածքներ»: Թեպետ պարզ էր, որ «զբաղեցրածը» եւս մեծագույն ցանկության դեպքում եւս չի կարող ընկալվել որպես մշտական օգտագործման հանձնված:



Տարածքների հարցը քննարկվել է նաեւ փոխանակման կտրվածքում: Մեղրիի եւ Լաչինի միջանցքի փոխանակման հնարավորության աղմուկը դեռ չի մարել: Տարածքների խնդիրը քննարկվել է նաեւ «Ադրբեջանի տարածքային ամբողջականության պահպանման» համատեքստում: Մասնավորապես, 1996 թ. ԵԱՀԿ Լիսաբոնի գագաթաժողովում:

Շարունակությունը՝ 3-րդ էջում

ՆՈՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ՝ ՀԻՆ ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՄԲ

Սկիզբը՝ 1-ին էջում

Այստեղ, թվում էր, թե որպես առաջնային խնդիր առաջ է քաշվում Ղարաբաղի կարգավիճակը, իրականում քննարկման էր դրված հետեւյալ հարցադրումը՝ ղարաբաղյան հիմնախնդիրը պետք է կարգավորել ելնելով «տարածքային ամբողջականությա՞ն», թե՞ «ազգերի ինքնորոշման» սկզբունքից: Ադրբեջանը պահանջում էր կյանքի կոչել տարածքային ամբողջականության սկզբունքը, հայկական կողմը՝ ինքնորոշման՝ վկայակոչելով ԵԱՀԿ Հելսինկյան եզրափակիչ փաստաթղթում ամրագրված միջազգային իրավունքի, նախեւառաջ ազգերի ինքնորոշման սկզբունքը:

Լեւոն Տեր-Պետրոսյանը պնդում էր. «Ադրբեջանի կողմից առաջարկված սկզբունքների հիման վրա հիմնախնդիրը լուծելու դեպքում, Լեռնային Ղարաբաղի բնակչության վրա կախված կլինի ցեղասպանության կամ բռնի տեղահանության մշտական սպառնալիքը», որի «բացառման միակ հնարավորությունը Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի հարգումն է»: Լիսաբոնում << 1-ին նախագահը հայտարարել էր. «Սումգայիթի, Կիրովաբադի և Բաքվի հակահայկական ջարդերը, ինչպես նաև Ղարաբաղի 24 հայկական գյուղերի բնակչության տեղահանության /1991թ. մայիս-հունիս/ փորձն ամենայն ակներեւությամբ ցույց է տալիս, որ Ադրբեջանը, չնայած բոլոր հավաստիացումներին, չի կարող Լեռնային Ղարաբաղի բնակչության անվտանգության երաշխիքներ ապահովել»:

«Տարածքային ամբողջականության պահպանման» միջազգային սկզբունքը << 2-րդ նախագահ Ռոբերտ Քոչարյանն ամրագրեց Ստամբուլում՝ ստորագրելով Եվրոպական անվտանգության խարտիան: Փաստաթղթում ամրագրված է. «ԵԱՀԿ շրջանակներում մեր պարտավորություններին համապատասխան մենք անհապաղ անց ենք կացնելու խորհրդատվություններ անհատական կամ կոլեկտիվ ինքնապաշտպանության իրականացման աջակցություն որոնող մասնակից-պետության հետ, եթե նրա հիքնիշխանությունը, տարածքային ամբողջականությունը գտնվում են սպառնալիքի տակ» (16-րդ կետ): Եվ միաժամանակ «Մարդու իրավունքների լիակատար հարգումը, ներառյալ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքները, լինելով ինքնին նպատակ, ավելի շուտ ամրապնդում են տարածքային ամբողջականությունն ու ինքնիշխանությունը, քան վնասում դրանց: Ինքնավարության բազմաթիվ հայեցակարգերը, ինչպես նաև վերոհիշյալ փաստաթղթերում նշված այլ մոտեցումները, որոնք համապատասխանում են ԵԱՀԿ սկզբունքներին, հանդիսանում են գոյություն ունեցող պետության ազգային փոքրամասնությունների էթնիկական, մշակութային և կրոնական ինքնօրինակության պաշտպանության և խրախուսման միջոցներ» (19):

Տարածքային ամբողջականության պահպանման խնդիրը, որ Մինսկի համանախագահների եզրաբանությամբ նշանակում է «տարածքների վերադարձ», արծարծվեց նախորդ շաբաթ սեպտեմբերի 25-ին, Նյու-Յորքում գումարված ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 58-րդ նստաշրջանում, որի ընթացքում Ադրբեջանի գործող վարչապետը պահանջեց կիրառել ԼՂՀ-ի հարցով ՄԱԿ-ի ընդունած թվով 4 բանաձեւերը, որոնց առանցքը դարձյալ խարխսվում է բազմաչարչար «Ադրբեջանի եւ այլ պետությունների տարածքային ամբողջականության պահպանման» պահանջին:

Այլեւս ակնհայտ է միջազգային կարգավորողները ի դեմս Մինսկի խմբի համանախագահող երկրների պահանջում են վերադարձնել ազատագրված տարածքները: Այդ պահանջը եղել է նաեւ Օսկանյանի եւ Քոչարյանի կողմից փառաբանվող «փարիզյան սկզբունքներում»: Այստեղ ընդամենը հայկական կողմին խայծ էր նետված «տարածքներ կարգավիճակի դիմաց» բանաձեւի հանգույն:

Նոր սկզբունքները, հմտորեն ներառելով հինը, ավելին ածանցվելով հնից, այս անգամ դրվում են անհամեմատ կտրուկ եւ որոշակի՝ վերադարձնել վեց շրջանները՝ Ֆիզուլին, Ջեբրայիլը, Ղուբաթլին, Աղդամը, Զանգելանը, Քելբաջարը: Բարձրաստիճան դիվանագիտական աղբյուրներին մոտ կանգնած անձիք վկայում են, որ հոկտմբերի 2-ին Փարիզում քննարկվել է հիշյալ շրջանների վերադարձման...ժամանակացույցը: Այստեղ անսպասելին ոչ միայն եւ ոչ այնքան հիմախնդրի կարգավորման փուլային տարբերակին վերադառնալն է, այլ այն, որ ազատագրված տարածքները վերադարձնելու խնդիրը Հայաստանի քաղաքական իշխանությունը լուծել է գոնե հոգեբանորեն պատրաստ է այդ լուծմանը: Պարտվողական այդ հոգեբանությունը նոր չէ, որ որդեգրել է Ռոբերտ Քոչարյանի թիմը: Դեռ ամիսներ առաջ << պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը անվրդով հայտարարում էր, թե Ղարաբաղն այդ տարածքները գրավել է սեփական անվտանգության եւ պաշտպանունակությունն ապահովելու համար եւ որ պարզ է, որ դրանք մի օր պետք է վերադարձվեն: Նդրի անգամ ոչ հուզական, այլ իրատեսական կամ դիվանագիտական արծարծման դեպքում թվում է, թե Ղարաբաղի անվտանգության միջազգային երաշխիքիներն ապահովված են: Սակայն ո՞վ կամ ովքե՞ր են տվել այդ երաշխիքները՝ համանախագահնե՞րը, որոնց երկրների ղեկավարները խճճվել են տարաբնույթ աշխարհաքաղաքական խնդիրների լաբիրինթոսում կամ զբաղված են միմյանց հանդեպ աշխարհաքաղաքական դավեր նյութելով: Այդ ի՞նչ միակարծություն է, որ համակել է համանախագահող երկրներին:

Փարի՞զն է այդ անվտանգության երաշխավորը, որը կրակն է ընկել աշխարհաքաղաքական իր խանդի եւ չդադարող պարտությունների ձեռքը: Մոսկվա՞ն, որի համար տարածաշրջանային համագործակցությունը» եւ «հարավկովկասյան պետությունների ինքնիշխանությունը» սկսվում եւ ավարտվում են Կրեմլում, ուր ավարտվում է նաեւ Հայաստանի աշխարհաքաղաքական մեկուսացումը ճեղքելու յուրաքանչյուր անգամ անհաջող փորձ:

Շարունակությունը՝ 5-րդ էջում